

զիրը մարդ լավ հասկանա, չի կարող թորգմանել, եթե խեղճ է մայրենի լեզվում:

Մեր կարծիքով, պիտի թարգմանել Եփեսոսիցի միայն այն գրամաները, որոնք չեն թարգմանվել Հովհաննես Մասեհյանի կողմից: Ռուսերեն Եփեսոսիցի մի քանի մարդիկ են թարգմանել և ահա ուսաներն ունեն Եփեսոսիցի լիակատար ժողովածուն: Մեր կարծիքով Մասեհյանը բավարար թարգմանություններ է արել (հայտնի են նրա միայն թարգմանությունները), սրանից հետո պիտի թարգմանել նրա չթարգմանածները՝ մի օր լիակատար հայերեն Եփեսոսիցի ունենալու համար:

«Ռիչարդ Գ-ից» հետո մենք արդեն ձեռնարկել ենք թարգմանելու «Անտոնիոս և Կլեոպատրա»:

ՎԱՀԱՆ ԹՈՒԹՎԵՆՅ

## Վ. ՍՈՒՐԵՆՅԱՆՅԸ ԵՆՔՍՊԹԻՐԻ ՍՈՆԵՏՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆԵԶ

Հրատարակում և առաջարան ԲՅՈՒՐԱԿՆ ԱՆՏԻՐԵԱՍՅԱՆԻ

Հայտնի է, որ Վարդգես Սուրենյանցը զեղանկարչությունից բացի զբաղվել է նաև գրական աշխատանքով. գրել է բանաստեղծություններ, մշակել է ժողովրդական հերիաթներ, ինչպես նաև թարգմանություններ է կատարել համաշխարհային գրականության խոշորագույն ներկայացուցիչների երկերից: Իմանալով մի շարք օտար լեզուներ, նա բնագործ կարգացել է Օմար Խայամի, Հաֆիզի, Գյոթեի, Հայնեի, Օսկար Ուայլդի, Եփեսոսիցի և այլ հեղինակների զործերը:

Իր սիրելի հեղինակների զործերից Սուրենյանցը կատարել է մի շարք թարգմանություններ: Մանոթանալով նկարչի արխիվին, տեսնում ենք, որ ամենից ավելի շատ թարգմանություններ նա կատարել է Եփեսոսիցից: Այս հանգամանքը, ինչպես և Սուրենյանցի կյանքից հայտնի որոշ զեպեր վկայում են, որ Եփեսոսիցը առանձնահատուկ տեղ է զբաղեցրել նկարչի կյանքում:

Անցյալին նա սկսել է ուսումնասիրել դեռևս պատանի հասակից, նախքան Մյունխենի Գեղարվեստից ակադեմիա սովորելու մեկնելը: Անգլիական գրականության մեջ Սուրենյանցին ամենից ավելի հրատարակել է Եփեսոսիցը: Գեռես 23 տարեկան հասակում (1883 թ.) նա ձեռնարկել է «Ռիչարդ III-ի» թարգմանությունը: Սուրենյանցը իր կյանքի ընթացքում թարգմանել է Եփեսոսիցի պիեսներից 6-ը («Ռիչարդ Գ», «Հուլիոս Կեսար», «Օթելլո», «Վինձորի ուրախ կանայք», «Միջամանային զիշերվա երազ», «Լիր արքա»<sup>1</sup>): Գրանցից հրատարակված է միայն «Միջամանային զիշերվա երազը» («Հուշարար», 1912, զիբբ Բ):

Ուշադրություն է զբաղում այն հանգամանքը, որ Սուրենյանցին զբաղեցրել են նաև Եփեսոսիցի սոնետները, որոնց հանդեպ հայ հասարակաչնության մեջ չի եղել այնպիսի հետաքրքրություն, որպիսին եղել է մեծ զրամատուրգի պիեսների նկատմամբ:

<sup>1</sup> Պիեսների վերնագրերը բերում ենք ըստ Վ. Սուրենյանցի թարգմանությունների:

Մինչդեռ Շեքսպիրի սոնետները, որ «Վերածնության շրջանի անգլիական ընթերցում-  
յան պատկն են կազմում»<sup>1</sup>, իսկ նշանավոր անգլիացի բանաստեղծ Վոդսվորթի արտահայ-  
տությունը՝ «Մի բանալի են, որով Շեքսպիրը իր սիրտը բացել է աշխարհին», բավականին  
նշանակալից տեղ են բռնում գրամատուրգի մտանգության մեջ: Ահա Սուրենյանցը հայ  
իրականության մեջ առաջիններից է, որ փորձում է շեքսպիրյան սոնետները հայ ընթեր-  
ցողին մատուցել մայրենի լեզվով: Պահպանվել են Սուրենյանցի ձեռքով թարգմանված  
շեքսպիրյան 5 սոնետ (12, 19, 30, 130, 154):

Թարգմանությունների ձեռագրերը ամփոփված են աշակերտական երկու տետրերի  
մեջ<sup>2</sup>: Տետրերից առաջինը շապիկ չունի, առաջին էջի վրա Սուրենյանցի ձեռքով գրված է  
«Մանր ոտանավորներ, ինքնուրույն և թարգմանական»: Այստեղ գտնում ենք 19 բանաս-  
տեղծություններ (ինքնուրույն և թարգմանական) և մեկ հեքիաթի («Գառնուկ եղբայր»)՝  
սևագրություններ: Տետրի 3-րդ թերթի վրա (երկրորդ երեսին) Շեքսպիրի 130-րդ սոնետի  
թարգմանության սեպագիրն է: Այնուհետև այլ հեղինակներից՝ Հայնեից, Գյոթեից, Ուլան-  
դից կատարված թարգմանություններ: 15-րդ թերթի առաջին երեսին Շեքսպիրի 30-րդ,  
զարձերեսին 154-րդ, իսկ 16-րդ թերթի ետևում 19-րդ սոնետների թարգմանություններն  
են: Տետրում բոլոր չորս սոնետների թարգմանությունների վրա Սուրենյանցը նկատելի  
աշխատանք է թափել, կան մի շարք ուղղումներ ու ճշտումներ:

Երկրորդ տետրի շապիկին Սուրենյանցի ձեռքով գրված է. «Բանաստեղծություններ  
ինքնուրույն և թարգմանական»: Տետրը սկսվում է 30-րդ սոնետի թարգմանության մաք-  
րագրությամբ, որին հաջորդում է 130-րդ սոնետի մաքրագիրը: Ապա գալիս են այլ թարգ-  
մանություններ (Հայնեից) և հետո իրար ետևից 19, 154 և 12-րդ սոնետների մաքրագրու-  
թյունները: Այսպիսով, երկրորդ տետրում բացի առաջին տետրի չորս սոնետներից կա  
նաև մի ուրիշը՝ 12-րդ սոնետը, որի սևագրությունը երևի մի այլ թերթի վրա է կատարված  
եղև: Բացի այդ, ինչպես տեսանք, սևագրությունների և մաքրագրությունների տետրակ-  
ներում սոնետների հերթականությունը տարբեր է:

Սևագրությունների տետրը ցույց է տալիս նաև, որ Սուրենյանցը շեքսպիրյան սոնետ-  
ները իրար ետևից չի թարգմանել, այլ նրանցով զբաղվել է ընդմիջումներով, որոնք եր-  
բևմն այնքան էլ փոքր չպետք է եղած լինեին: Բե ինչու է իր թարգմանած սոնետները  
տարբեր հերթականությամբ մաքրագրել, զժվար է ասել, բայց անտարակույս է, որ Սու-  
րենյանցը մաքրագրել սկսել է այն բանից հետո, երբ ավարտել է նրանցից առնվազն  
չորսի (սևագրությունների տետրում եղածների) թարգմանությունը և մշակումը: Դա երև-  
վում է այն բանից, որ սևագրերի տետրում եղած նյութերի հերթականությունը մաքրա-  
գրությունների տետրում ազատորեն խախտված է, այսինքն՝ արդեն եղած սևագրությու-  
ններից Սուրենյանցը իր ընտրությամբ արտագրել է մերթ այս, մերթ այն զործը: Ուշ-  
դրություն է գրավում, օրինակ, այն հանգամանքը, որ թեև 30-րդ սոնետը Սուրենյանցը  
թարգմանել է 130-րդից հետո, բայց մաքրագրել է առաջինը: Դա տիրություն հագնեցված  
մի բանաստեղծություն է, ուր հեղինակը խոր ցավով է հիշում անցած տարիները, ինչպես  
և շիրականացված իրձերի մասին:

<sup>1</sup> А. Аникст, Творчество Шекспира, М., 1963, էջ 329:

<sup>2</sup> Գրականության և արվեստի թանգարան, Սուրենյանցի ֆոնդ, տետր № 1 և 2:

Վ. Քերզրաշյանի հավաստմամբ այդ ստեղծեր 1917 թվականին<sup>1</sup>, Հովհ. Քումանյանի խմբագրությամբ, հրատարակվել է «Հորիզոն» թերթում. «Մենք հիմք ունենք ենթադրելու, — գրում է բանաստեղծը, — որ այս ստեղծի թարգմանական լեզուն խմբագրել է Հ. Քումանյանը: «Անցյալ վաղա՛յն» արտահայտությունը հիշեցնում է մեծ բանաստեղծի սեր»<sup>2</sup>:

Պետք է ստեղծ սակայն, որ Սուրենյանցի ձևադրերում՝ թե սեպագրության և թե մարդագրության մեջ «Անցյալ վաղա՛յն» արտահայտությունը կա, որով և բուրբուխի անհիմն է դառնում վերոհիշյալ ենթադրությունը: Իսկ Սուրենյանցի թարգմանության մեջ բանաստեղծի խմբագրությունը փնտրելու հանգամանքը արդյոք ցույց չի՝ տալիս այդ թարգմանության պատշաճ մակարդակը:

Հիշյալ տեղերից ոչ մեկում որևէ թվական կամ վայրի անուն չկա: Ուստի և հնարավոր չեղավ պարզել, թե երբ է Սուրենյանցը գրադրել շերտային ստեղծանքի թարգմանությունը: Եթե իբրև 30-րդ ստեղծի թարգմանությունը հրատարակվել է 1917-ին, ապա միևնույն է, գրանով չի կարելի որոշել ստեղծանքի թարգմանության թվականը կամ թվականները:

Նախ, ինչպես ասվեց, անկասկած է, որ Սուրենյանցը հինգ ստեղծեր միաժամանակ չի թարգմանել, ապա և այն, որ մարդագրությունը կատարել է բոլոր կամ, համենայն դեպս, շրտ ստեղծի, ինչպես և առաջին տետրի մյուս նյութերի վրա կատարած աշխատանքը ավարտելուց հետո: Իսկ Սուրենյանցի պես գրողի մարդու համար բավական ժամանակ էր պահանջվելու մի տետր ինքնուրույն և թարգմանական բանաստեղծությունների գրելու և մշակելու համար: Եվ վերջապես 1917 թ. ստեղծներից մեկի հրատարակումը հասկանալի է, որ որևէ հիմք չի տալիս մտածելու, թե ստեղծները թարգմանվել են այդ թվականին կամ մտակա տարիներին: Քերևու, ամենից հավանականն այն է, որ Սուրենյանցը շերտային ստեղծանքի թարգմանությամբ գրադրել է 10-ական թվականներին:

Ստորև հրատարակում ենք Սուրենյանցի թարգմանած բոլոր հինգ ստեղծները՝ պահպանելով նկարչի մարդագրությունների տեսքում եղած հարողականությունը:

### ՇԵՔՍՊԻՐԻ 30-ՐԴ ՍՈՆԵՏԸ

*When to the sessions of sweet silent thought...*

Երբ ես սուզված երազի մեջ հոգեպես,  
Հետ եմ նայում անվերադարձ անցյալիս,  
Հին ցավերըս դուրս են ելնում նոր հանդես,  
Վայ եմ տալիս շիրագործված իդձերիս:  
Եվ աչքերս թաց են լինում արցունքով  
Նորանց մասին որ հանդշում են հողի տակ  
Հուշիկ մաշված խարոսկ սիրուս կարոտով,  
Ես ողբում եմ իմ հույսերը փռլատակ:

<sup>1</sup> Վ. Քերզրաշյան, Շերտայինը հայերեն, Երևան, 1956, էջ 102—103: Մենք թերթից հինք 1917 թ. «Հորիզոնի» հավաքածուն, բայց նման հրատարակում չգտանք: Արդյոք 1917 թվականին մի այլ պարբերականում չի՞ հրատարակվել հիշյալ ստեղծը:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 103:

Այն ժամանակ դադլած սրբախի խոցերով  
Անցյալ վայերս համարում եմ մի առ մի  
Լաց եմ լինում առատ աղի արցունքով  
Վըճարելով անվճար պարտքըս վաղեմի:  
Բայց երբ այգտեղ, ով իմ անգին, քեզ հիշեցի—վերջացավ՝  
Անցածն անցավ, հինը գընաց ու մոռացվեց ամեն ցավ:

### ՇԵՔՍՊԻՐԻ 130-ՐԴ ՍՈՆԵՏԸ

*My Mistress' eyes are nothing  
like the sun...*

Նորա աչքերն արեգակի շեն նրման,  
Եվ շրթունքը բուստ չեմ կարող անվանել,  
Նորա կուրծքը ճերմակ ձյունի չէ նրման,  
Չեն մազերի նրա գանգուրքը ոսկեթել:  
Վարդը, գիտեմ, վառ կամ ճերմակ է լինում  
Նրա այտերին այդ վարդերից չեմ փնտրում  
Եվ նրա շունչը ինձ չէ երբեք հիշեցնում  
Ոչ խնկահոտ և ոչ դրախտի զով բուրում:  
Նրա խոսելը հիանալով եմ լքում,  
Թեպետ և չէ նա սոխակի դայլայլիկ,  
Եվ նրա ծանրը քայլափոխը չեմ խառնում  
Մի դիցուհու դուր սըլացքին հանդարտիկ:  
Բայց և այնպես ես սիրում եմ անհամեմատ նրան ավել,  
Քան բոլորին, որոնց քերթող շողոքորթներն են գովել:

### ՇԵՔՍՊԻՐԻ 19-ՐԴ ՍՈՆԵՏԸ

*Devouring Time, blunt thou the lion's paws...*

Անկուշտ ժամանակ, ժանիքն առյուծի բրթացրու,  
Թող երկիրը իր բերքերը ինքն ուտե,  
Վազրի սուր սուր ատամները թափեցրու,  
Փյունիկ արծիվն իրա բոցում տապալի:  
Տարեդարձին լավն ու վատը բեր ու տար,  
Զարդ ու պաճուլճ շուրջըդ կրնաս դու սրբել  
Եվ ամեն հույս թող, թե կամիս, անկատար,

Միայն մեկ բան կուզեմ ես քեզ արդելել  
 Փոս շքութիւնս իմ սիրելուն աշակերին,  
 Անկոտորով վեհ ճակատին շրջիւղչիս  
 Չարիքներըդ նորա մոտով թող անցնին  
 Թող ըզմայլի ե Ապագան նրա տեսքից  
 Բայց քո կամքն է, քեզ կրծագրեմ, ինչ որ կամիս, ա՛ն գընա՛  
 Իմ սիրելին իմ երգերում հավետ մանուկ պիտ մընա:

ՇԵՔՍՊԻՐԻ 154-ՐԳՒ ՍՈՆԵՏԸ

*The little Love-god lying once asleep...*

Մի օր երոս ծառի տակին նիրհում էր  
 Եվ կերտնն էլ սրտեր դազող կողքին վառ,  
 Հավերժահարս կուսանց մի խումբ գընում էր  
 Տեսավ քնած է մանուկ աստվածն անպատկաս:  
 Եվ նորանցից զեղեցկագունն կույս ձեռքով  
 Միրտ բորբոքող կրակը վերցրեց ու առավ  
 — Որ բովել էր այդքան սրտեր իր բոցով —  
 Ու զինաթափ քնած աստրծուն նա արավ:  
 Կույսը կրակը ցուրտ ազդուրում հանգցրեց  
 Որի ջուրը սիրուց տենդաց ու եռաց  
 Եվ ցավ բուժող ջերմուկ դարձավ ջրընկեց —  
 Հիվանդները բշտապեցին փութընթաց:  
 Ես էլ զնացի բուժեմ ջրով զաղված սրտիս խոց ու ցավ,  
 Բայց ջուրն ետուն սիրտ տենդից—սիրտ զովացնել շրկարցավ:

ՇԵՔՍՊԻՐԻ 12-ՐԳՒ ՍՈՆԵՏԸ

*When I do count the clock  
 that tells the time...*

Երբ ժամերն եմ ժամանակի համարում  
 Եվ պարզ օրը մութ գիշերում խավարեց,  
 Երբ դիտում եմ ինչպիս վարդն է թառամում,  
 Կամ սե ծամիդ ձերմակ ալիք հայտնըվեց.  
 Երբ որ տեսնեմ տերեւթափ ձկուն ծառ,  
 Որի սավերը նոր էր հովվին զով տալիս,  
 Երբ դաշտերի կանաչ արոտը դալար

Մեռած խուրճեր հանդիսանա աչքերիս —  
Այն ժամանակ սիրուն տեսքդ եմ ափսոսում՝  
Մի՞թե նրան էլ ժամանակը պիտ տանի՝  
Գեղեցկության շնորհքն հավիտյան չէ տևում  
Հինը գնում է տեղը պիտ նորին պատկանի:  
Բայց ճար չըկա փրկվելու նրա գերընդուց, մի հուզվի՛  
Դու էլ դրա դեմ ժառանգներով կարող ես միշտ նորոգվի:

#### Գ. ՖԵՏԻՍՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿԸ

Առաջարև և հրատարակում ԱՐՓԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Մանչեստրերնակ գիտնական, բանասեր և հասարակական գործիչ Գառնիկ Ֆետիսյանը (1864—1936) հայտնի է բանասիրությանը իր ուսումնասիրություններով և հոդվածներով: Հիմնականում աշխատակցել է «Մասիս» և «Անահիտ» պարբերականներին, տպագրելով Մանանդյանի «Խորենացու առեղծվածի լուծումը», «Աշխարհաբարի ընթացքը ժՔ դարուն», «Կորյունի վարքը» ուսումնասիրությունները և այլ բաղամթիվ հոդվածներ: Բաղմագան նախասիրություններ ունենալով, Ֆետիսյանը զբաղվել է նաև թարգմանությամբ: Նա թարգմանել է Ենթապիրի «Անտոնիոս և Կլեոպատրա» դրաման: Բացի այդ՝ թարգմանությանը կցել է մի ընդարձակ առաջարան, որը վկայում է նրա զբաղան-չեթապիրագիտական հիմնավոր պատրաստությունը: Իր թարգմանությունը Ֆետիսյանը տպագրել է նախ «Անահիտում», ապա՝ 1911 թվականին, առանձին գրքով:

Ստորև բերվող նամակը, որ հրատարակվում է առաջին անգամ, հասցեագրված է բանաստեղծ, լրագրող, հասարակական գործիչ Վահան Մալեղյանին: Նամակը գրված է թարգմանության մի օրինակը Մալեղյանին ուղարկելու առիթով: Այս նամակը հետաքրքիր է որպես թարգմանչի անկեղծ մտորումների վկայություն, ինչպես նաև Ենթապիրց այլ գործեր թարգմանելու մտադրությամբ, որը, որքան հայտնի է, չի իրագործվել:

Մանչեստր 1912 ապրիլ 25

Սիրելի Վահան,

Շատոնց կուզեի Եգիպտոսի անմոռանալի թագուհիին վերա Ենթապիրի գրած հույակապ թատերգության թարգմանության օրինակ մը Ձեզի ղրկել, բայց միշտ կհետաձգեի որպեսզի նամակ մը միասին գրելով խընդրեմ որ համբերությունը ունենաք մինչև ծայրը կարդալու: Այլա՛դ, հեղինակի կամ թարգմանչի նվեր ղրկած գրքերուն բախտը միշտ այդ չէ եղած, և լսած եմ շատ անգամ գնահատականի մը առաքումը՝ առանց գործը վերծանելու, ըստ բախտի հոս հոն աչք նետելով կամ երկու տող ալ հառաջարանեն կարդալով միայն: Ինձի մեծ հաճույք մը եղավ այս թարգ-

մանուկյան պարապումս, որովհետև անձինքը պատմական են, և զի շատ հետաքրքրող ժամանակամիջոցի մը մեջ աղբաձ, որովհետև հայ աշխարհը, հայ թագավոր մը ստվիտրոն կանցնեն մեկին, ալալ, միշտ ճակատադրին կովախնձորի հանգամանքովին, և որովհետև զերպարապես գրավիշ, խելահեղիշ, խորհրդացույց էակ մըն է եղած Կլեոպատրան, որուն մեջ սիրո մեծությունը թագուհիի վեհություն հետ լծորդված հայվապուտ սխրանք մը կրնծայեն նկարագրին:

Չափը որով գրեցի սկիզբները նեղեց զիս, և կարծեմ աշխարհարարի մեջ նոր օրերու թատերգությանց համար չի գործածված, բայց զեպի վերջերը՝ կարծեմ ալիլի բնակացույց:

Միտքս է Համլետ և Ռոմեո ու Ճյուլիթ, և կիր թագավորը ձեռք աննել կարգով, միշտ նույն շափով, ու փոխնիփոխ արձակ ու չափավոր, ինչպես է բնագիրը: Թերևս մնայուն բան մը ըլլան այս թարգմանությունները, որոնք գոնե բնագրին մեջ գործված խոշտանդումներ, խժտություններ չըլլայնուն կրնա մարդ ապահով ըլլալ, ևս արդեն գտնվածները ուրիշ անունով շեմ կրնար կոչել, համբերությամբ բաղդատելու ձեռնարկած ըլլալով, և սրչափ անսպառ համբերություն ունենալու է մարդ առոր համար:

Սուրենյանի հետ կտեսնվի՞ր:

Իր զնահատականը թարգմանության վերա այնքան արդարուն և գիտակցորեն զնահատող՝ զիս իր պարտապան ըրած է, և իր հողվածի մը ստիպող պահանջը գոհացնելու կհարկադրե, թեպետ զույսս բնված է ամեն կերպ մտածումներե, և խնամյալ, ազատ հողված մը արտադրել պիտի պետք ունենար ալիլի հանդարտամտության, Շերպայր intime կուզեի գրել, կամ վիպակ մը, որուն հերոսը Մանչեստրի ծանոթ երիտասարդ մըն է եղած. թերևս Ձեր պատասխանեն ազդվիմ մեկը կամ մյուսը նախընտրելու:

Եթե ազատ (որ հիմա գործիս բերած եմ) ալիլի վարժեցնեմ, կհուսամ ալիլի լաթն շափով մը օգտակը մեր այնքան մոտիկ մտերմութենեն վայելելու համար թղթակցություն մը Ձեզ հետ, որ իմ հաճույքներուս մեծերեն պիտի ըլլար:

Ձերդ անկեղծորեն

Գ. Ֆետկյան